ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի Ինստիտուտի տնօրեն

Մ. Ա. Քարամյան

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի

Ամբիոն՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության

Հեղինակ՝ ի.գ.թ., Հակոբյան Ա. Վ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ «Ատելության և թշնամանքի շարժառիթներով կատարվող հանցագործություններ (HELP)»

Մագիստրոս կրթական ծրագիր (հեռակա)՝ 042101.04.7

«քրեական իրավունք և դատավարություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՈՏԱՑԻԱ

Սույն դասընթացը նպատակ ունի ապահովել իրավաբանական մասնագիտության ուսանողներին, դատավորներին, դատախազներին, փաստաբաններին և իրավապահ մարմինների աշխատակիցներին անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներով՝ կապված ատելության հողի վրա կատարված հանցագործությունների և ատելության խոսքի հետ:

Դասընթացի նպատակն է խորացնել մասնակիցների իրավական գիտելիքներն այն իրավական, սոցիալական և քաղաքական կոնտեքստներում, որտեղ հաճախ զարգանում են խտրականության ու ատելության վրա հիմնված հանցավոր դրսևորումները: Դասընթացը մշակվել է Եվրոպայի Խորհրդի կողմից՝ HELP (Human Rights Education for Legal Professionals) ծրագրի շրջանակներում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակը՝

- Ներկայացնել ատելության հողի վրա կատարված հանցագործությունների ու ատելության խոսքի հիմնարար իրավական բնութագիրը
- Ապահովել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ստանդարտների իմացություն
- Զարգացնել մասնակիցների կարողությունները՝ կիրառելու մարդու իրավունքների եվրոպական և տեղական մեխանիզմները նման դեպքերի արդյունավետ քննության, դատապարտման ու կանխարգելման համար

Խնդիրներ՝

- Իմանալ և տարբերակել ատելության խոսքն ու ազատ արտահայտվելու իրավունքը
- Վերլուծել ԵՄ և ԵԽ իրավական ակտերը և դատական պրակտիկան
- Պարզել ոստիկանության, դատախազության և դատարանների գործառույթները ատելության հողի վրա կատարված հանցագործությունների գործերում
- Առանձնացնել խտրական շարժառիթները որպես հանցագործության մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՕԲՅԵԿՏՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

Օբյեկտը՝ Հասարակական հարաբերությունները, որոնք առնչվում են անձանց իրավունքների խախտմանը՝ հիմնված ռասայի, ազգության, սեռի, դավանանքի, սեռական կողմնորոշման կամ այլ ինքնության հատկանիշների վրա:

Առարկան՝ Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների քրեաիրավական և դատավարական կարգավորումը, դրանց բացահայտման, քննության, դատապարտման և կանխարգելման ինստիտուտները:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմքերի իմացություն
- Մարդու իրավունքների միջազգային համակարգի հիմքերի իմացություն
- Միջազգային և ներպետական իրավունքի համադրության կարողություն

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների իրավական բնութագիր
2. Ատելության խոսքի սահմանումը և դրա տարբերակումը խոսքի ազատությունից
3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատավճիռներ՝ կապված ատելության հողի վրա կատարված հանցագործությունների և ատելության խոսքի հետ

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտելիքի կիրառման հմտություններ՝

1. Գործող օրենսդրության կիրառություն ատելության շարժառիթով հանցագործության գնահատման գործընթացում
2. Իրավապահ մարմիններում նմանատիպ գործերի արդյունավետ քննություն իրականացնելու կարողություն

Ընդհանրական իմացական հմտություններ՝

1. Իրավաբանական փաստարկման, վերլուծության և եզրակացության կարողություն
2. Մարդու իրավունքների խախտումների կանխատեսման և արձագանքման ունակություն

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ)

Ինքնուրույնություն և պատասխանատվություն՝

1. Իրավական դիրքորոշում ձևավորելու կարողություն՝ մարդու իրավունքների գերակայության սկզբունքով
2. Պատասխանատվություն՝ օրենքի պահպանման, խտրականության բացառման և մարդու արժանապատվության ապահովման հարցերում

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

- Տեսական դասախոսություններ՝ իրավական սահմանումների և կարգավորումների ուսումնասիրության նպատակով
- Դիտարկման վարժանքներ՝ իրական դեպքերի վերլուծության միջոցով
- Խմբային քննարկումներ՝ իրավական դիլեմաների վերաբերյալ
- Տեսանյութերի դիտում և քննարկում՝ կոնկրետ նախադեպերի օրինակով
- Թեստավորում՝ գիտելիքի ամրապնդման նպատակով

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

- Դասընթացը ներառված է «**քրեական իրավունքի և դատավարություն**»՝ .4. ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար:
- Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	10
1.1.1. Դասախոսություններ	4
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	6
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	4
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	58
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք

- **Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների**

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքն եր
1	2=3+4	3	4
Թեմա 1. Ընդհանուր ակնարկ	7		
Թեմա 2. Միջազգային և եվրոպական իրավական գործիքներ	7		
Թեմա 3 Եվրոպական մարդու իրավունքների կոնվենցիայի (ԵՄԻԿ) կիրառում	7		1
Թեմա 4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը	7		1
Թեմա 5. Իրավական սահմանում և տարաբնույթ մոտեցումներ	7	1	1
Թեմա 6. Քննչական և դատական պրակտիկա	7	1	1
Թեմա 7. Առցանց ատելության խոսք	7		1
Թեմա 8 Իրավապահ մարմինների պարտավորությունները	7	1	1
Թեմա 9 Դատավորների և դատախազների դերը	7	1	
Թեմա 10. . Համապատասխանություն եվրոպական ստանդարտներին	10		
Ընդամենը	72	4	6

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Բաժին I. Ներածություն

- **Թեմա 1. Ընդհանուր ակնարկ**
  - Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների և ատելության խոսքի հիմնական սահմանումները
  - Ատելության շարժառիթի սոցիալ-իրավական բնութագիրը
  - Ատելության հիմքով հանցագործությունների կապը խտրականության դրսևորումների հետ

Բաժին II. Միջազգային և եվրոպական իրավական գործիքներ

- **Թեմա 2. Եվրոպական մարդու իրավունքների կոնվենցիայի (ԵՄԻԿ) կիրառում**
  - Հոդված 10. Խոսքի ազատություն
  - Հոդված 14. Խտրականության արգելք
  - Հոդված 17. Իրավունքների չչարաշահման արգելք
- **Թեմա 3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը**
  - Վերլուծություն առանցքային վճիռների՝ կապված ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանազատման հետ
  - Գործնական օրինակներ (*Perinçek v. Switzerland, Vejdeland v. Sweden, Erbakan v. Turkey, Féret v. Belgium*)

Բաժին III. Ատելության հողի վրա կատարված հանցագործություններ

- **Թեմա 4. Իրավական սահմանում և տարաբնույթ մոտեցումներ**
  - Քրեաիրավական բնորոշումներ՝ տարբեր իրավական համակարգերում
  - Ատելության շարժառիթը՝ որպես հանցագործության ծանրացնող հանգամանք
- **Թեմա 5. Քննչական և դատական պրակտիկա**
  - Ոստիկանության, դատախազության և դատարանների դերը
  - Առանձնահատկություններ՝ վկաների պաշտպանության, շարժառիթների ապացուցման և տուժողների հետ աշխատանքում

Բաժին IV. Ատելության խոսք

- **Թեմա 6. Սահմանումները, իրավական դաշտը և նուրբ հավասարակշռությունը**
  - Ատելության խոսքի սահմանումը և տարբերակումը խոսքի ազատությունից
  - Ազատ արտահայտման սահմանափակումներ ըստ միջազգային և ներպետական իրավունքի
- **Թեմա 7. Առցանց ատելության խոսք**
  - Սոցիալական մեդիայի և թվային հարթակների պատասխանատվությունը
  - Դատական պրակտիկա և միջազգային փորձ

Բաժին V. Ոստիկանություն, դատախազություն, դատական համակարգ

- **Թեմա 8. Իրավապահ մարմինների պարտավորությունները**
  - Քրեական հետապնդման վարույթում խտրական շարժառիթի բացահայտման առանձնահատկություններ

- Էֆեկտիվ քննության պահանջներ՝ ըստ ՄԻԵԴ պրակտիկայի
- **Թեմա 9. Դատավորների և դատախազների դերը**
- Վճիռների հիմնավորման կարևորությունը
- Անկախություն, անաչառություն և հակախտրականության սկզբունք

Բաժին VI. Եզրակացություն և ամփոփում

- **Թեմա 10. Համապատասխանություն եվրոպական ստանդարտներին**
- Խտրականության դեմ պայքարի իրավական քաղաքականության գնահատում
- Վերապատրաստման և պրոֆեսիոնալ զարգացման կարիքներ

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Верховский А. М. Антиэкстремистское законодательство и злоупотребления при его применении. М.: Центр «Сова», 2008.
1. Верховский А. М. Уголовное право стран ОБСЕ против преступлений ненависти, возбуждения ненависти и языка вражды. М.: Центр «Сова», 2015.
2. Кондаков А. Преступления на почве ненависти против ЛГБТ в России : отчет. – СПб. : Центр независимых социологических исследований ; «Реноме», 2017.
3. Мониторинг судебных процессов по преступлениям на почве расовой ненависти. Отчет за 2016 год. // СПб ОО «Гражданский контроль».
4. Деятельность государственных органов РФ в области борьбы с преступлениями на почве расовой ненависти. // СПб ОО «Гражданский контроль».
5. Преступления на почве ненависти: опыт зарубежных стран и российское правоприменение. // [«Гражданское содействие»].
6. Особенности рассмотрения уголовных дел о преступлениях на почве ненависти: уголовно-правовые, криминалистические и психологоправовые аспекты. Учебно- методическое пособие. Серия «Права человека» – СПб. 2011.

7. Велиев Ф. З. Мотив ненависти или вражды в уголовном законодательстве России.
8. Ксенофобия, радикализм и преступления на почве ненависти в Европе в 2015 году. − М.: Эдитус, 2016.
9. Гилинский Я. «Преступления ненависти»: история, теория, реальность // Индекс/Досье на цензуру. 2007. № 25.
10. Методика расследования преступлений, совершаемых на почве национальной или расовой вражды или ненависти / А.Я. Винников, Н.М. Гиренко, О.Н. Коршунова и др. Под общ. ред. О.Н. Коршуновой. – СПб., 2002.
11. Преступления ненависти в России: Мониторинг и поддержка пострадавших от расистского насилия (Берлин, 2010)
12. Уголовное преследование по делам о преступлениях на почве ненависти (БДИПЧ ОБСЕ, 2015).
13. Законодательство против преступлений на почве ненависти Практическое руководство (БДИПЧ ОБСЕ, 2009).
14. Преступления на почве ненависти: предотвращение и реагирование (БДИПЧ ОБСЕ, 2009)
15. Бюллетень: борьба с преступлениями на почве ненависти (БДИПЧ ОБСЕ, 2009).
16. С.Коливер. Законы, запрещающие hate speech: действенны ли они?
17. Язык вражды, Европейский суд по правам человека, 2012 (англ.).
18. Рекомендация № R (97) 20 Комитет министров Совета Европы 1997.
19. Шоу [Shaw] М. Предотвращение преступлений на почве ненависти: международные стратегии и практика [Preventing Hate Crimes: International Strategies and Practice]. – Международный центр предупреждения преступности, апрель 2002 г.
20. Stotzer, R. (June 2007). "Comparison of Hate Crime Rates Across Protected and Unprotected Groups". Williams Institute.
21. Streissguth, Tom (2003). Hate Crimes (Library in a Book), p. 3. ISBN 0-8160-4879-7.
22. Meyer, Doug (2014). "Resisting Hate Crime Discourse: Queer and Intersectional Challenges to Neoliberal Hate Crime Laws". Critical Criminology. 22: 113–125.
23. Boeckmann, Robert J.; Turpin-Petrosino, Carolyn (2002). "Understanding the Harm of Hate Crime". Journal of Social Issues. 58 (2): 207–225.
24. McPhail, Beverly (2003). "Gender-Bias Hate Crimes: A Review". In Barbara Perry (ed.). Hate and Bias Crime: A Reader. Psychology Press. ISBN 9780415944076.
25. Jacobs, James B. & Kimberly Potter. (1998). Hate Crimes: Criminal Law and Identity Politics. New York: Oxford University Press.
26. International Covenant on Civil and Political Rights (1976).
27. International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (1969).

28. International Convention on the Suppression and Punishment of the Crime of Apartheid (1976).
29. UNESCO Declaration on Race and Racial Prejudice (1978).
30. Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (1951).